ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2, տարածք 251

հեռ. (+374 11) 700 100, էլ. փոստ՝ info@globalcredit.am

Ինտերնետային կայք՝ www.globalcredit.am

Հաշվետվություն թիվ 3, 23.10.2019

2019թ. հոկտեմբերի 2-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի խորհուրդը որոշում է կայացրել թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար և 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ թողարկման ընդհանուր ծավալով.

Առաջին տրանշ. Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար է, քանակը՝ 10,000 (տասը հազար) հատ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար է: Շրջանառության ժամկետը 24 (քսանչորս) ամիս է: Արժեկտրոնի տոկոսադրույքը կկազմի տարեկան ֆիքսված 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական տոկոս), որը կվճարվի կիսամյակային պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն և չունեն հետգնման հնարավորություն: Թողարկման արժույթն ԱՄՆ դոլարն է:

Երկրորդ տրանշ. Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ է, քանակը՝ 50,000 (հիսուն հազար) հատ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ է: Շրջանառության ժամկետը 12 (տասներկու) ամիս է, արժեկտրոնի տոկոսադրույքը տարեկան ֆիքսված 9 (ինը) տոկոս է՝ արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ: Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն և չունեն հետգնման հնարավորություն: Թողարկման արժույթը ՀՀ դրամն է: